



ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

«ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ»

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար

2020 թվականի հունվարի 1-ից ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ:

1. ՈՎՔԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼ ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

1) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ապահովագրական գործակալները, ապահովագրական բրոկերները, **«Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձինք (ուժի մեջ է մտել 04.07.2025թ.-ից)**, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատները, արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, նոտարները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, **սաունաների, բաղնիքների և շոգեբաղնիքների կազմակերպման գործունեություն իրականացնողները**, աուդիտորական կազմակերպությունները, առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից)։

2) **ՀՀ-ում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «Մ (ԷՄ) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և «N (ԷՆ) Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող «78.2. Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3. Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները (ուժի մեջ է մտել 01.07.2025թ.-ից)։**

3) **միջմարզային, ներմարզային երթուղու շահագործման կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջմարզային, ներմարզային երթուղով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնողները (ուժի մեջ է մտել 01.07.2025թ.-ից)։**

4) **հետևյալ ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը՝**

- խորհրդատվական,
- իրավաբանական,
- հաշվապահական,
- ինժեներական,
- գովազդային,
- դիզայներական,

- մարկետինգային,
- թարգմանչական,
- փորձագիտական,
- **փորձաքննական (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**
- բժշկական օգնության և սպասարկման,
- ատամնատեխնիկական,
- **վարսավիրական (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**
- **մարմնի խնամքի (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից) ,**
- **ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման (ուժի մեջ է մտել**

01.01.2025թ.-ից),

- **միջնորդական (այդ թվում՝ անշարժ գույքի առք ու վաճառքի և (կամ) վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման) (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**

- **ծրագրային ապահովման մշակման (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**

- տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման),

- գիտահետազոտական,

- փորձարարական-կոնստրուկտորական,

- փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական),

- **շինարարական (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**

- **ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**

- **անշարժ գույքի գնահատման և չափագրման գործունեություն իրականացնողները (ուժի մեջ է մտել 01.01.2025թ.-ից),**

- Երևան քաղաքի վարչական սահմաններում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները (բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի հավելված 3-ով նախատեսված՝ զբոսաշրջային տների միջոցով մատուցվող՝ հյուրանոցային ծառայությունների հետ անմիջականորեն կապված՝ հանրային սննդի (նախաճաշ, ճաշ, ընթրիք) ոլորտի գործունեության):

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել նաև սույն կետում նշված աշխատանքներին կամ ծառայություններին համանման այլ աշխատանքներ կատարողները կամ ծառայություններ մատուցողները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքների կամ ծառայությունների բնորոշումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին համապատասխան:

Աշխատանքը կամ ծառայությունը համարվում է ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածում, մասում, կետում կամ ենթակետում նշված այլ աշխատանքին կամ ծառայությանը համանման, եթե այն ընդգրկված է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների

դասակարգչի այն դասում, որում ընդգրկված են համապատասխանաբար՝ տվյալ հոդվածում, մասում, կետում կամ ենթակետում նշված այլ աշխատանքը կամ ծառայությունը:

ՕՐԻՆԱԿ 1.

Անհատ ձեռնարկատերը մատուցում է համակարգչային տեխնիկական միջոցները, ծրագրային ապահովումը և կապի (հաղորդակցման) տեխնոլոգիաները ինտեգրող համակարգչային համակարգերի նախագծման և մշակման ծառայություններ: Նշված ծառայությունները ներառված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «62.02՝ Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում» դասում:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համակարգչային տեխնիկական միջոցները, ծրագրային ապահովումը և կապի (հաղորդակցման) տեխնոլոգիաները ինտեգրող համակարգչային համակարգերի նախագծման և մշակման ծառայությունները Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի համաձայն բնորոշվում են որպես խորհրդատվական կամ դրան համանման ծառայություններ՝ նշված ծառայությունները մատուցող անհատ ձեռնարկատերը 2020թ. հունվարի 1-ից չի կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

Քաղվածք

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի

62.02 Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում

Այս դասը ներառում է համակարգչային տեխնիկական միջոցները, ծրագրային ապահովումը և կապի (հաղորդակցման) տեխնոլոգիաները ինտեգրող համակարգչային համակարգերի նախագծումը և մշակումը: Այստեղ ներառվում են նաև օգրվողների ուսուցման հետ կապված ծառայությունները:

Բացառվում է՝

- համակարգչային տեխնիկական միջոցների կամ ծրագրային ապահովման առևտուրը, տես 46.51, 47.41*
- համակարգիչների տեղադրումը, տես 33.20*
- սպառողի պահանջներին համապատասխան անհատական համակարգիչների հավաքումը, տես 62.09*
- ծրագրային ապահովման տեղադրումը, խափանման դեպքում ծրագրային ապահովման*

վերականգնումը, տես 62.09

ՕՐԻՆԱԿ 2.

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը մատուցում է հեղինակային իրավունքի գրանցման հետ կապված փաստաթղթերի պատրաստման ծառայություններ: Քանի որ նշված ծառայությունները ներառված են Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «69.10՝ Իրավաբանական գործունեություն» դասում, հետևաբար՝ դրանք բնորոշվում են որպես իրավաբանական ծառայություններ և կազմակերպությունը չի կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

Քաղվածք

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի

69.10 Իրավաբանական գործունեություն

69.10.0 Իրավաբանական գործունեություն

Այս ենթադասը ներառում է՝

- քրեական գործերի քննության ընթացքում փաստաբանական գործունեություն՝ հետաքննության, նախաքննության և դատական քննության մարմիններում այլ անձանց շահերի պաշտպանություն, քրեական, քաղաքացիական, աշխատանքային, վարչական, վարչարարական վեճերի քննության ընթացքում խորհրդավորությունների տրամադրում և ներկայացուցչություն

- իրավաբանական խորհրդավորական ծառայությունների մատուցում, իրավաբանական անձանց պետական գրանցման, արտոնագրային և հեղինակային իրավունքի գրանցման հետ կապված փաստաթղթերի, պայմանագրերի, համաձայնագրերի և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի պատրաստում

- նոտարների, արբիտրաժային տրիբունալի, դատական փորձագետների, սնանկության գործերով կառավարիչների ծառայություններ

Բացառվում է՝

- արդարադատության բնագավառում գործունեությունը, տես 84.23

3) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը՝ այդ գործունեության տեսակների մասով,

4) փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել,

5) փոխկապակցված համարվող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 24 միլիոն դրամը,

6) համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք,

7) վարձակալական վճարի, տոկոսի (բացառությամբ սպասարկող բանկում առկա ընթացիկ հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսի) և (կամ) ռոյալթիի

ստացում նախատեսող՝ գործող պայմանագրի՝ վարձակալական վճար, տոկոս և (կամ) ռոյալթի ստացող կողմ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը:

ՕՐԻՆԱԿ 3.

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը 2023 թվականի մարտի 3-ին ֆիզիկական անձի հետ կնքել է անշարժ գույքի վարձակալական պայմանագիր 6 ամիս ժամկետով՝ համաձայն որի, վարձակալ ֆիզիկական անձը պարտավորվում է յուրաքանչյուր ամիս կազմակերպությանը վճարել 200000 ՀՀ դրամ վարձակալական վճար: Քանի որ վարձակալական վճար ստացող՝ վարձակալական պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ, հետևաբար՝ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը 2023թ.-ի մարտի 3-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը չի կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

2. ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված պայմաններին բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը **միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.**

1) **տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից** մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), **եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ** հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար (բացառությամբ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), **որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից** մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, **եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ** հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն:

3) **մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը**

կամ անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը **մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ** հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

4) **մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից** մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), եթե հարկ վճարողը **մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ** հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

5) **հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվանից** մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքերի), **եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ** հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, **բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, համարվել է շրջանառության հարկ վճարող կամ համարվել է ԱԱՀ վճարող:**

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27.08.2019թ. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագրի և միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N558-Ն հրամանի N1 հավելվածով:

3. ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն ազատվում են միկրոձեռնարկատիրության մասով առաջացող բոլոր **պետական հարկերի** հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից (այդ թվում՝ որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, ինչպես նաև շահութահարկի կանխավճարների կատարման պարտավորությունից), **բացառությամբ՝**

1) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) ապրանքների մասով սահմանված կարգով հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից.

2) **անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող (հաշվարկվող) հարկվող եկամուտներից Օրենսգրքով սահմանված կարգով եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից.**

ՕՐԻՆԱԿ 4.

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող կազմակերպությունը ֆիզիկական անձի հետ կնքել է աշխատանքային պայմանագիր՝ ամսական 150000 ՀՀ դրամ աշխատավարձով: Համաձայն 2023թ.-ի հուլիսի 1-ից ՀՀ հարկային օրենսգրքում ուժի մեջ մտնող փոփոխությունների՝ 2023թ.-ի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար կազմակերպությունը վարձու աշխատողներին հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով եկամտային հարկը կհաշվարկվի 20 տոկոս դրույքաչափով:

3) ակցիզային հարկի, բնապահպանական հարկի և (կամ) ճանապարհային հարկի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից:

Պետական հարկերի տեսակներն են՝ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), ակցիզային հարկը, շահութահարկը, եկամտային հարկը, բնապահպանական հարկը, ճանապարհային հարկը, շրջանառության հարկը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում տեղական հարկերից, պետական վճարներից, տեղական վճարներից:

Մասնավորապես, միկրոձեռնարկատիրության սուբյեկտները ֆիզիկական անձանց վճարման ենթակա (վճարված) եկամուտներից որպես հարկային գործակալ **սոցիալական վճարները և դրոշմանիշային վճարները** հաշվարկում են ընդհանուր սահմանված կարգով:

Բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ

ձեռնարկատերը, որպես ինքնագրադրված անձ, սոցիալական վճար կատարում է կամավորության սկզբունքով, իսկ դրոշմանիշային վճարը՝ ընդհանուր սահմանված կարգով:

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի շրջանակներում եկամուտների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

ՕՐԻՆԱԿ 5.

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող կազմակերպությունը մեկ այլ կազմակերպությանն օտարել է անշարժ գույք (երկհարկանի շինություն)՝ 10 միլիոն ՀՀ դրամի չափով, սակայն տվյալ անշարժ գույքի՝ օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող հարկման բազան, կազմում է 20 միլիոն ՀՀ դրամ: Քանի որ, միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի շրջանակներում եկամուտների հաշվառումն իրականացվում է Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով, հետևաբար, համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի՝ կազմակերպության կողմից անշարժ գույքի օտարումից եկամուտը պետք է հաշվարկի Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսից (կադաստրային արժեք) ոչ պակաս չափով, այն է 16 միլիոն ՀՀ դրամի չափով ($20 \text{ միլիոն} * 0.8 = 16 \text{ միլիոն}$): Տվյալ դեպքում, կազմակերպության կողմից անշարժ գույքի օտարումից օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան հաշվարկվող եկամուտը, որը կազմում է 16 միլիոն ՀՀ դրամ, կներառվի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող կազմակերպության իրացման շրջանառության մեջ:

4. ՄԻԿՐՈՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

4.1 Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը մինչև հարկային տարվան **հաջորդող հարկային տարվա փետրվարի 1-ը ներառյալ** սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության վերաբերյալ:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևը հաստատված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27.08.2019թ. «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագրի և

միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N558-Ն հրամանի N4 հավելվածով:

4.2 Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը **մինչև յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ** սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի հաշվարկ:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներն **ազատվում են** հարկային մարմին ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված **այլ հարկային հաշվարկներ** ներկայացնելուց, բացառությամբ՝

1) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված փաստաթղթերի.

2) սահմանված սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

3) սահմանված կարգով ակցիզային հարկ վճարող համարվելու դեպքում՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի.

4) բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված տեղեկությունների, հաշվետվությունների, որպես հարկային գործակալ նոր աշխատողի գրանցման հայտերի ներկայացման պարտավորությունից:

Մասնավորապես, միկրոձեռնարկատիրության սուբյեկտները պարտավոր են Կառավարության սահմանած կարգով հարկային մարմին ներկայացնել Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին), ինչպես նաև կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվություններ:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտների կողմից հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Միկրոձեռնարկատիրության համակարգի վերաբերյալ դրույթները ներկայացված են
ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ գլխում: